

Հարգելի Մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը: «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերում մանրամասն նկարագրված և սահմանված են մասնակցության պարտադիր և ոչ պարտադիր պայմանները, ինչպես նաև հայտը պատրաստելու և ներկայացնելու կարգը և խնդրում ենք այնուամենայնիվ հիմնվել հրավերի պահանջների և սահմանված պայմանների վրա: Համաձայն «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» մրցույթի հրավերի ՄԱՍ I-ի 5-րդ կետը, Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումը.

Պարզաբանում

Հարց առաջին

Ոչ գնային առաջարկը ներկայացնելիս, արդյո՞ք անհրաժեշտ է պահանջվող փաստաթղթերից զատ կնքել և ստորագրել հրավերում ներառված Հավելված 4.1-ը այնպես ինչպես առկա է՝ պահպանելով աղյուսակը՝ նույն ձևով, թե՞ պետք է ջնջել այդ հավելվածում առկա աղյուսակը և պարզապես նշել, որ ընկերությունը առաջարկում է, և անմիջապես կցել անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատասխան

Հայտով պահանջվող բոլոր հավելվածները պետք է լինեն կնքված և ստորագրված: Հավելված 4.1-ը ներկայացվում է «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված ձևաչափին և ներկայացման ուղեցույցին համապատասխան:

Հարց երկրորդ

Հրավերով նշված է, որ վարձակալությամբ տրվող տարածքների սանիտարահիգիենիկ վերահսկողության և սննդի փորձարկումների պարբերաբար անցկացման կնքված պայմանագրի առկայությունը հավատարմագրված լաբորատորիայի հետ պարտադիր է, սակայն հարց է ծագում, թե ինչպես կարող ենք կնքել լաբորատորիայի հետ պայմանագիր, եթե դեռևս հաղթող չենք և չունենք այդ տարածքների հանդեպ որևէ իրավունք: Կամ հնարավո՞ր է արդյոք ներկայացնել մեր կազմակերպության այլ հասցեներից որոշներում արդեն իսկ կնքված պայմանագրի օրինակ՝ հավաստելու համար, որ մենք արդեն իսկ համագործակցում ենք սանիտարահիգիենիկ վերահսկողություն իրականացնող կազմակերպության հետ:

Պատասխան

Նշված պայմանագիրը պետք է վերաբերի միայն «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված տարածքներին և կարող է կնքվել պայմանով, ինչպես կնքվում են գործակալության, ենթակապալի և համատեղ գործունեության պայմանագրերը՝ կոնկրետ մրցույթով պահանջվող ծառայությունների կամ աշխատանքների կատարման համար:

Հարց երրորդ

Գոյություն ունի՞ արդյոք ձևանմուշ՝ ոչ գնային առաջարկի մեջ ներառված 4, 5, 6, 7 կետերին պատասխանելու համար:

Պատասխան

Ոչ գնային առաջարկը ներկայացվում է «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված ներկայացման ուղեցույցին և ձևաչափին համապատասխան:

Հարց չորրորդ

Կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ մասնագիտական փորձառության, տեխնիկական միջոցների, ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների առկայությունը հաստատող փաստաթղթերը պետք է ներկայացնել հաղթող ճանաչվելուց հետո, թե՞ ամբողջական փաթեթի հետ:

Պատասխան

Սույն հարցի պատասխանը մանրամասն նկարագրված է «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերի ՄԱՍ I /ՀԱՅՏՏ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ և ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ/ 6-րդ կետով:

Հարց հինգերորդ

Հրավերում պահանջվում է լրացնել պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա լրացուցիչ տեխնիկական միջոցների տվյալները և մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է հավաստենք փոքր խանութներից գնված տեխնիկայի, սպասքի և այլնի մասին սեփականության փաստը, եթե վերջիններս որևէ փաստաթուղթ չեն տրամադրել:

Պատասխան

«ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված է որ մասնակիցը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա լրացուցիչ տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները /միայն այն դեպքում երբ տեխնիկական միջոցները հանդիսանում են մասնակցի սեփականությունը կամ մասնակիցը ունի դրանց ժամանակավոր օգտագործման իրավունքը/: Հավաստող փաստաթղթերը հայտով ներկայացվում են միայն այն դեպքում երբ տեխնիկական միջոցները հանդիսանում են մասնակցի սեփականությունը կամ մասնակիցը ունի դրանց ժամանակավոր օգտագործման իրավունքը, հակառակ դեպքում պահանջվող տվյալները և փաստաթղթերը մասնակցի կողմից ներկայացվում են հաղթող մասնակցից ճանաչվելու դեպքում վարձակալության պայմանագիր կնքելու օրվանից հաշված 5 օրացույցային օրվա ընթացքում: Վերոնշյալով պայմանավորված պարզաբանում ենք որ հրավերով պահանջվում է՝ մասնակիցը հայտով ներկայացված լրացուցիչ տեխնիկական միջոցների նկատմամբ պետք է ունենա սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունք, ինչի փաստը պետք է հավաստի այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերով: